

ԼԻԱՆԱ ՍԱՆԹՐՅԱՆ

ՊԱՏԿԵՐԱՍՏԵՂԾՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՄԱՍՏԵՂԻ «ՏԱՓԱՆ ՄԱՐԳԱՐԸ» ՊԱՏՄՎԱԾՔՈՒՄ*

Քանալի բառեր՝ ոճավորում, պատկերավորման միջոցներ, արտահայտչական միջոցներ, մակդիր, համեմատություն, փոխաբերություն, շրջասույթ, օքսիմորոն, կրկնություն, շրջադասություն:

«Համաստեղ մեծ նորություն մըն է մեր գրական կյանքին մեջ: Ան մերօրյա մատենագրության մեջ կբանա գլուխ մը, որ իրն է, ան ստեղծած է եղանակ մը, հայ գյուղացին, - և անոր մեջքեն մարդկային ճակատագիրը, - տեսնելու և թարգմանելու, զոր իրեն պես ներուժ ու ազդու կերպով մեր մեջ ոչ մեկն ունի այս պահուս», - նկատել է Արշակ Չոպանյանը և շարունակել. «...Նորությունը զոր կբերե իր անձնական տեսությունն է, և իր ոճը, մեծապես ինքնատիպ, ջղուտ, հակիրճ, գունագեղ, կյանքով լեցուն, իրականության առույգ բանաստեղծությամբ թրթռուն» [1:760]:

Եվ իսկապես, Համաստեղը ստեղծել է իր ինքնատիպ ոճը՝ անթերի գեղեցկությամբ, նուրբ հումորով, յուրատեսակ պատկերներով:

«Տափան Մարգարը» պատմվածքում Համաստեղը պատկերավորման իր արվեստը ցուցադրել է մակդիրների, համեմատությունների, փոխաբերությունների, շրջասույթի, օքսիմորոնի միջոցով, իսկ արտահայտչականությունն ապահովել գերազանցապես շրջադասությունների և կրկնության օգնությամբ:

«Մակդիրը լեզվի պատկերավորման միջոց է, այլաբերության տեսակ, ոճական այնպիսի հնարանք, որի միջոցով տրվում է առարկայի, երևույթի, երբեմն նաև գործողության ոչ թե հիմնական ու բնորոշ, տրամաբանական տարբերակիչ հատկանիշը, այլ նրա գեղարվեստական, պատկերավոր գեղագիտական բնութագրությունը», գրում է Լ. Եզեկյանը [2:334]:

Իսկ Ա. Մարությանը շեշտը դնում է մակդիրի հուզական կողմի վրա և նշում. «Այն բառը կամ բառակապակցությունը, որ արտահայտչորեն ու պատկերավոր ձևով, հիմնականում փոխաբերական նշանակությամբ բնորոշում, բնութագրում է առարկան, երևույթը հեղինակային վերաբերմունքով՝ արտահայտելով գրողի հուզական վերաբերմունքն ու գնահատականը, կոչվում է մակդիր» [3:142]:

Ռուս լեզվաբան Ի. Գոլուբը առանձնացնում է պատկերավորող և հուզական մակդիրներ: Առաջինները գերիշխում են գեղարվեստական նկարագրություններում, երկրորդներն ավելի քիչ են հանդիպում և փոխանցում են հեղինակի զգացմունքները, տրամադրությունը [4]:

Մակդիրների առաջին և հիմնական հատկանիշն այն է, որ նրանք ունեն փոխաբերական իմաստ և առաջին հերթին մակդիրը հենց դրանով է տարբերվում քերականական որոշից: Բառի փոխաբերական իմաստը մակդիր կերտող միակ և հիմնական հատկանիշն է, ինչպես առարկաների, երևույթների, այնպես և գործողության հատկանիշները գեղագիտորեն բնութագրելիս [2:335]:

*Հոդվածն ընդունվել է 25.04.2018թ.:

Հոդվածը տպագրության է երաշխավորել Գրիգոր Նարեկացի համալսարանի լեզուների ամբիոնը:

Համաստեղի ստեղծած մակդիրների հիմքում ընկած է անձնավորումը, մարդկային հատկանիշներով առարկաները բնորոշելը:

Այսպես՝ ճաղատ սեխերուն մեջ կ'աշխատեր պարտիզպանը ճաղատ....[5,287]: Գիժ երեսով կռաբանջարներուն մեջ՝ դեռ նոր իջած արագիլ մը իր թևերը կը ծալեր....[5,287]:....Էն վերջը՝ բախի ծայրին հետ հատած էին նաև արևուն հիվանդ շողերը վերջին [5,288]:....Մեկ կտորը վազան ջուրի առվի մեջ կը ձգես....[5,289]: Բնայթուտ հովերը, փոքրիկ, չարաճճի մանուկներու նման, անոր հետ կը կատակեին....[5,290]: Աշխարհի կապտորակ ստվերին վրա կը թափառեր մութ ամպի կտոր մը շվարուն [5,291]:

Ինչպես նկատելի է, մակդրային արժեքով գործածվել են ածականները: Քիչ չեն նաև բառակապակցություններով արտահայտված մակդիրները:

Օրինակ՝ Հարդով ու ցեխով լեցված խրտվիլակներն այլանդակ, գինովի գանազան ձևերով....մեկին հասակը ինքն իր վրա փլած....[5,285]: խրտվիլակները թզուկ, փայտերուն կռքնած խրտվիլակներն հաշմանդամ, սմբած կամ ուռեցած փորերով, ծալված ոտքերով, կախադանեն դեռ նոր վար առնված ոճրագործի մը լիկած մարմնով [5,286]: Տափան Մարգար ուներ արևեն այրված դիմագիծ մը [5,288]:....Տափան Մարգար, ժամուն բակը, մեկ քանի ծունկ աղոթք ընելե հետո....դաշտ իջավ [5,291]:

Մակդիրի հիմքում ընկած է թաքնված համեմատություն: Դա լավ երևում է կապային կապակցություններով ձևավորված մակդիրներում, որոնց թիվը փոքր չէ Համաստեղի նշված պատմվածքում:

Այսպես՝ Կովերը տուն կարտորային փեթակի պես լեցուն ծիծերով....[5,287]: Սրտի չափ լայն իր կռակը մեզի դարձուցած, բախը ուսին՝ գյուղ կ'իջներ [5,287]: Ուրիշ անգամ մը տեսա շալվարեն չանջուլի պես կախված դաշտի սեզերու հետ եկեղեցի կը մտներ [5,288]: Ուներ տափանի չափ լայն, սերմնացանի թևեր [5,288]:Զույգ մեծոյ գոմեշներ՝ ճակատներուն վրա զույգ սպիտակ նախշեր, փյունիկ թռչունի նկարին նման....[5,290]: Թթերու ճամփուն վրա, գոմեշները զույգ, քառայրներու մութ բերաններուն նման ահավոր, ինկած էին անկենդան [5,292]:Մեզմե քիչ հեռու թումբին վրայեն կը քալեր հաղթ հասակով, ուսերը լայն ու ծուռ, հարդով լեցված. ցորյաններու ալիքներու պես վետ-վետ, միննույն շալվարը, թաղիքե միննույն գլխարկը, ապան....[5,287]:

Համեմատությունն այլաբերության տարատեսակ է, լեզվի պատկերավորման միջոց, ոճական այնպիսի հնարանք, որի դեպքում որևէ առարկայի կամ երևույթի նկարագրությունն ավելի պարզ ու տպավորիչ, պատկերավոր դարձնելու նպատակով համադրվում է այդ առարկայի որևէ կողմի արտաքին կառուցվածքով կամ ներքին իմաստային յուրահատկություններով նման առարկայի կամ երևույթի հետ, որն ավելի ծանոթ է և բացահայտում է նկարագրվող իրողության էությունը:

Համեմատության մեջ սովորաբար ընդգծվում է նաև համեմատվող առարկաների համար ընդհանուր հատկանիշը, որի հիման վրա կատարվում է նրանց համադրումը, և երկու հասկացությունների միջև ստեղծվում փոխադարձ կապ: Համեմատությունները, բացի երկու առարկաների միջև եղած ընդհանրությունները մատնանշելուց, միաժամանակ արտահայտում են հեղինակի վերաբերմունքը համեմատվող առարկայի կամ անձնավորության նկատմամբ [2,340]:

«Համեմատությունը, նշում է Պ. Պողոսյանը, տարբեր առարկաների կամ երևույթների միջև եղած ընդհանուր հատկանիշի հիման վրա մի առարկան կամ երևույթը տվյալ պահի ու հանգամանքների պահանջով մյուսին նմանեցնելու,

հավասարեցնելու կամ նույնացնելու երևույթն է, որին դիմում ենք առարկային կարևորություն տալու, նրա գեղագիտական արժեքը բարձրացնելու նպատակով» [6,10]:

Համեմատությունների ստեղծման գործում Համաստեղին օգնության է հասնում բնությունը:

Այսպես՝ Ան գիտեր, թե ականջներուն ո՞ր տեղը պետք է շփել, որ ցուլը գառնուկի պես հանդարտեր [5,288]: Տափան Մարգար, վերջալույսին հետ ու վերջալույսին պես, գյուղին մեջ ընկղմեցավ [5,288]: Քիթը, այտերը, երկար ու փոքրիկ անկյուններով՝ կարծես պղնձե շինված ղլլային [5,288]: Քմայքոտ հովերը, փոքրիկ, չարածճի մանուկներու նման, անոր հետ կկատակեին ու սուլելով, քրքջալով ցորյաններու մեջ կը պահվեին [5,290]: Ամպերը, մուրճով գարնված պղինձի պես հնչեցին [5,291]: Անոնց ճիշտ ետև կաղնիի մը պես շրջված էր Տափան Մարգարը [5,292]:

«Հաջող համեմատության կարևորագույն հատկանիշներից մեկը անսպասելիության, նորության, հնարամտության տարրն է: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր հեղինակ չափազանց անհատական է համեմատությունների ընտրության և գործածության իմաստով», -նշում է Ա. Եֆիմովը [7,491]:

Եվ Համաստեղը բացառություն չէ: Հետաքրքիր են այն դեպքերը, երբ Համաստեղը համեմատություններն արտահայտում է երկրորդական նախադասություններով, ինչպես՝ Մորմես կը հեռանայի ու կը մոտենայի այնպես, ինչպես գեփյուռն անտառեն [5,286]:Իր էրիկեն կ'ակնածեր այնպես, ինչպես նոր հարս մը իր կեսրարեն [5,288]: Անոր մեջ դաշտի բովանդակ անհանգստությունը կար այնպես, ինչպես գիշերվա լռության մեջ հորդ առու մը պիտի փլեր. Խաղաղ ցորյաններու մեջեն հովը պիտի անցներ և կամ հերկված արտին մեջ լծվորուկ մը պիտի շարժեր [5,290]:

Ոճական այս դարձույթի հետ կապված է փոխաբերությունը, որը համարում են նաև թաքնված համեմատություն, որում արտահայտվում է առարկաների ինչպես մշտական, այնպես էլ ժամանակավոր, անցողիկ, պատահական նմանությունը [8]:

Լ. Եզեկյանը փոխաբերությունը բնորոշում է որպես «այլաբերության տարատեսակ, խոսքի պատկերավորման, ոճավորման այնպիսի միջոց, որի հիմքում ընկած է երկու առարկաների կամ երևույթների նմանությունը, և դրա շնորհիվ գրողը կամ խոսողը (նրանցից մեկի անունը փոխարինում է մյուսի անվամբ կամ նրանց բնորոշ որևէ հատկանիշով» [2,345]:

Համաստեղի փոխաբերությունները անկրկնելի են ու ինքնատիպ, մեծ մասամբ դարձյալ սերտորեն կապված բնությանը, գյուղին, նրա մարդկանց:

Այսպես՝ Ամեն գարունի, երբ....փոքրիկ գառնուկները դուրս կ'ելլեին իրենց փոքրիկ տոտիկներով հողին պորտը դրոշմելու, պարտիզպանը կը շալկեր իր խրտվիլակն ու պարտեզ կ'իջներ [5,286]: Անդին, երկու արտ հեռու կապույտ պաստառին վրա գծագված ամպի կտոր մը անութին տակ, կ'երևեր Տափան Մարգարի նկարը հսկա [5,287]: Վերջալույսը՝ ամպերուն մեջ գծած հորդեհի գեղեցիկ նկար մը կ'ավերեր [5,287]: Վերջալույսը տժգունեցավ աշունի գունով....[5,287]: Արտույտները, հոն, վեր կը թրվռային, վայր կ'իջնեին, թե իրենցմե ո՞րը առաջին անգամ արևուն առաջին ճառագայթը պիտի ողջունե [5,291]: Արևն իր առեջները առաջին անգամ Տափան Մարգարի թաղիքե գլխարկին նետեց [5,291]:Արշալույսը հետզհետե կը ճերմկնար՝ արծաթե գույնով, հեռո՛ւ, բլուրին վրա ծևելով Տափան Մարգարի ու գոմեշներու հաղթ ստվերները [5,291]: Երկնքի վրա ամպի

կտորները շատցան ու իրարու մոտ հսկա փիղերու երամակ մը կազմեցին [5,291]: Ամպերը կողորային, կայծակը, շեղքի պես սուր, երկնքի կուրծը կպատռեր... [5,291]: Թամարը հոն էր, ամբողջ հասակը լացով փլած [5,292]:

Փոքրիկ պատմվածքում Համաստեղը ստեղծել է հեղինակային շրջասություն՝ Վերջալույսը տծուներցավ աշունի գույնով... [5,287]:

«Աշունի գույն» շրջասությով Համաստեղը փոխարինում է կարմիր-դեղին-նարնջագույնը՝ պատկերն ավելի տպավորիչ ու գունավոր դարձնելով:

Եվս մի հետաքրքիր երևույթի ենք հանդիպում այս պատմվածքի շրջանակներում: Խոսքը օբսիմորոնի մասին է: Ինչպես վկայում է Ս. Էլոյանը. «Օբսիմորոնը կարևորագույն ոճաբանական միջոց է և մեծ կիրառություն ունի գրական լեզվի գեղարվեստական, հրապարակախոսական ոճերում: Տրամագծորեն հակադիր և անհամատեղելի հատկանիշներն իրենց անսպասելիությամբ և արտառոտությամբ առավել սուր ու շեշտակի են դարձնում ասելիքը, և ընդգրկող երևույթը ստանում է պատկերավորության մեծ ուժ և արտահայտչականություն» [9,173]:

Այսպես՝ Դաշտը....գոմեշներն իրենց փնջածակերը կը լայնցնեին, թեթև փոթերիկի պես անցնող հովերն ամբողջությամբ կը շնչեին... [5,290]:

Նախ՝ թեթև փոթերիկ, ապա՝ հովեր, հակադրությունը ստեղծում է արտառոտ, բայց աշխույժ պատկեր:

Ինչպես արդեն նշել ենք, արտահայտչականության Համաստեղը հասել է հիմնականում կրկնության և շրջադասության միջոցով: Կրկնության մեկ դեպք է առկա «Տափան Մարգարը» պատմվածքում՝ Ան կը սիրեր իր գոմեշները, անոնց հետ կ'ապրեր, անոնց հետ կը խոսեր սրտանց. գույգ մեծղի գոմեշներ՝ ճակատներուն վրա գույգ սպիտակ նախշեր, փյունիկ թռչունի նկարին նման. գույգ գոմեշներ՝ պարարտ դնդերներով, Տափան Մարգարի կուրծքին չափ լայն ճակատներով, ամբողջ լեռ մը իրենց ետև քաշելու չափ հուժկու վիզերով [5,290]:

«Անոնց հետ» և «գույգ գոմեշներ» կրկնություններն ընդգծում են գյուղացու համար գոմեշների կարևորությունը, իսկ «չափ» կապական բառի կրկնությամբ՝ շեշտում նրանց արժեքը:

Առավել մեծ թիվ են կազմում շրջադասությունները: Բերենք միայն մի քանի օրինակ՝ Դուք տեսա՞՞ծ եք խրտվիլակներն արտերուն [5,285]:Կապած էր գոտի մը ծալ-ծալ [5,286]: Ճաղատ սեխերու մեջ կ'աշխատեր պարտիզպանը ճաղատ [5,287]: Անդին....ամաի կտոր մը անութին տակ, կ'երևեր Տափան Մարգարի նկարը հսկա [5,287]:Կը փայլփայլեին խոփերը փայլուն. կը լսվեին հնչյունները խոփերուն [5,287]: Քիթը, այտերը, երկար ու փոքրիկ անկյուններով՝ կարծես պղինձե շինված ըլլային [5,288]: Ան, հոն, արտերուն մեջ էր միշտ [5,288]: Հորիզոնին մոտ նախիրը ահագարհուր գյուղ կը վազեր [5,292]: Ամպերը հանդարտեցան, տարափը դադարեցավ հանկարծ [5,292]: Թթենու ճամփուն վրա, գոմեշները գույգ, քարայրներու մոտ է:

Համաստեղի համար շրջադասությունը միջոց է ծառայում հետադաս անդամը շեշտելու և ուշադրության կենտրոնում տեղադրելու: Հիմնականում շրջում շարադասությամբ են գործածվել որոշիչները, սակավ դեպքերում՝ հատկացուցիչը, ժամանակի և նպատակի պարագաները, ուղիղ խնդիրը:

Այս թեթև անդադարձը Համաստեղի լեզվաշխարհին թույլ է տալիս պատկերացում կազմելու այն յուրատիպ ոճի ու մտքի ճկունության, պատկերների անսպասելի ու խոսուն, երգեցիկ ու հյութեղ, տեղ-տեղ խորքային հունորով ներծծված խոսքարվեստի մասին, որ դրսևորում է հեղինակն իր ստեղծագործություններում, և որը դեռ կարոտ է բացահայտվելու ու ներկայացվելու:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Չոպանյան, Երկեր, Երևան, 1988:
2. Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Երևան, 2006:
3. Ա. Մարության, Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, 2000:
4. www.textologia.ru/russkiy/lingvisticheskiy-analiz/izobr-virazit-sredstva/raznovidnosti-i-gruppi-epitetov-kak-sredstva-yazika/2348/?q=463&n=2348
5. Վ. Գաբրիելյան, Սփյուռքահայ գրականություն, Երևան, 1994:
6. Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Երևան, 1990:
7. Ա. Եֆիմով, Գեղարվեստական խոսքի ոճաբանություն, Մոսկվա, 1961:
8. russkiiyazyk.ru/leksika/chto-takoe-metafora-v-literature.html
9. Ս. Էլյան, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Երևան, 1969:

ԱՍՓՈՓՈՒՄ

ՊԱՏԿԵՐԱՍՏԵՂԾՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՄԱՍՏԵՂԻ «ՏԱՓԱՆ ՄԱՐԳԱՐԸ»
ՊԱՏՄՎԱԾՔՈՒՄ

ԼԻԱՆԱ ՍԱՆԹՐՅԱՆ

Սփյուռքահայ գրականության ինքնատիպ դեմքերից է Համաստեղը, իսկ նրա լեզվական աշխարհն աչքի է ընկնում իր անսովոր ու գեղեցիկ երանգներով:

Պատկերների ստեղծման գործում Համաստեղը հենվում է մակդիրների, համեմատության, փոխաբերության, շրջասույթի, օքսիմորոնի վրա, իսկ արտահայտչականությունն ապահովում գերազանցապես շրջադասությունների և կրկնության օգնությամբ:

Մակդիրների մեջ հետաքրքիր են կապային կապակցություններով և բառակապակցություններով, համեմատություններում՝ երկրորդական նախադասություններով արտահայտվածները:

Նա ստեղծել է հեղինակային շրջասույթ, կիրառել օքսիմորոնի հետաքրքիր օրինակ:

Շրջադասության միջոցով շեշտել է հետադաս գործածված անդամների կարևորությունը:

РЕЗЮМЕ

СРЕДСТВА СОЗДАНИЯ ОБРАЗОВ В РАССКАЗЕ
АМАСТЕГА "ТАПАН МАРКАР"

ЛИАНА САНТРЯН

Ключевые слова: стилизация, средства изображения, выразительные средства, эпитет, сравнение, метафора, перифраз, оксюморон, повтор, инверсия.

Одной из уникальных фигур литературы армянской диаспоры является Амастег, а его языковой мир отличается необычными и красивыми оттенками.

Для создания образов Амастег использует эпитеты, сравнения, метафору, перифраз, оксюморон, а экспрессивность выражает главным образом с помощью инверсии и повторов.

Представляют интерес эпитеты, выраженные предложными сочетаниями и словосочетаниями, и сравнения, выраженные второстепенными предложениями.

Он создал авторский перифраз, применил интересный пример оксюморона.

С помощью инверсии Амастег подчеркнул важность использования переставленных членов предложения.

SUMMARY

THE MEANS OF CREATING IMAGES IN THE STORY "TAPAN MARKAR" OF HAMASTEGH

LIANA SANTRYAN

Key words: *stylization, means of representation, expressive means, epithet, comparison, metaphor, periphrasis, oxymoron, repetition, inversion.*

One of the unique figures of the literature of the Armenian diaspora is Hamastegh and his world of language is distinguished by unusual and beautiful shades.

To create images Hamastegh uses epithets, comparisons, metaphor, periphrasis, oxymoron and expressiveness is expressed primarily through inversion and repetition. The epithets expressed by prepositional combinations and word combinations and comparisons expressed by secondary sentences are of great interest.

He created the author's periphrasis, applied an interesting example of an oxymoron. With the help of inversion, he stressed the importance of using re-arranged members of the sentence.